

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1983 թվականին Նյու Յորքում «Սբ. Վարդան» հրատարակչության կողմից լույս է ընծայվել ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի (գրական անունով՝ Շեն Մահ) «Սերը կամար» խորագիրը կրող բանաստեղծությունների մի փոքրիկ հատոր: Հատորում ընդգրկված են քսան քերթվածներ՝ անգլերեն թարգմանությամբ հանդերձ: Թարգմանությունը կատարել են բանաստեղծուհի Դիանա Տեր-Հովհաննիսյանը և արձակագիր Մարպպետ Մարկոսյանը: Հատորի **ներածականը** գրել է ամերիկահայ պատմվածագիր և գրաքննադատ Փիթըր Սուրյանը:

Այստեղ վերոհիշյալ ժողովածուից հաճույքով արտատպում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրված մի բանաստեղծություն, որ հեղինակը գրել է իր երիտասարդ տարիքին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴՈՒՆ ՄԵՐ ՀՐԱՇՔ

Միայն անունդ—հրաշք—բավ է պանդուխտ իմ հոգիս
Կործանումն և անլուր իր նահանջեն կորվելու.
Էջմիածին, դուն կանգո՛ւն...: Թող միշտ հպարտ կոթողվիս
Իմ պապերեն իբրև ձայն ու մայր հողեն այցելու:

Ի՛նչ փույթ ըլլաս ալևոր, ի՛նչ փույթ՝ բեկված հո՛րդ բաժակ.
Ըստվերներուդ, գիտնաս դուն, ըափրփանքին ինչ կարոտն
Ունիմ խորունկ: Կապրի՛ս դուն, Էջմիածի՛ն, ու բուժակն
Ես դուն հիվանդ սրտերուն, անհույսներուն թափառող:

Ու կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ... պայծառանաս պիտի դուն,
Դառնաս խարիսխ ամրության ու հրավեր դեպի տուն...:
Տե՛ս, կը քալեն, կը քալեն կարավաններ նոր, ցնծուն,
Փոխակերպած անապատն ու հին ըսպանդն կպրանուն...:

Բավ է անո՛ւնդդ միայն: Էջմիածի՛ն, կապրի՛ս դուն:
Ու քեզի հետ կապրիմ ե՛ս, հպարտ-հպարտ սրտերուն
Համապարկին տալով ձայն: Ծաղկապարդվե դուն կանգուն,
Դու մեր հրաշք, մեր կտակ, մեր գալիքին երգ կանգուն...:

ՇԵՆ ՄԱՀ